ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

2301, ք. Հրազդան, Կենտրոն, Վարչական շենք, Հեռ. (+374 223) 2 37 13 , Ֆաքս (+374 223) 2 36 63, էլ.փոստ kotayk@mta.gov.am

14.12.2018թ. N 07/22.1/6881-18

« ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՀԿ ՆԱԽԱԳԱՀ Շ.ԴՈՅԴՈՅԱՆԻՆ

Հարգելի՛ տիկին Դոյդոյան,

Ի պատասխան Ձեր՝ 2018թ.-ի դեկտեմբերի 11-ի 5/26755-18 հարցմանը, հայտնում ենք, որ

1. Մարզպետարանի պաշտոնական կայքէջում՝ «մարզպետարան» բաժնի «հաշվետվություններ» ենթաբաժնում՝ http://kotayk.mtad.am/reports/, մարզպետի 2016 և 2017 թվականների հաշվետվությունների բովանդակության 22-րդ և 24-րդ (փաստաթղթաշրջանառություն և քաղաքացիների ընդունելություն) էջերում՝ http://kotayk.mtad.am/files/docs/29763.pdf և http://kotayk.mtad.am/files/docs/23802.pdf, ներկայացված են տվյալ ժամանակահատվածում մարզպետարան հասցեագրված դիմումների և տեղեկատվական հարցումների վիճակագրությունները՝ չառանձնացված:

2. Մարզպետարանի «Դիմեք մեզ» բաժնի «Դիմումների և տեղակատվական հարցումների վիճակագրություն» ենթաբաժնում տեղադրված են 2018թ.-ի մայիս-հոկտեմբեր ամիսներին մարզպետարան հասցեագրված դիմումների, ինչպես նաև տեղեկատվական հարցումների ամփոփ վիճակագրությունները՝ http://kotayk.mtad.am/reviewofapplications/:

Միաժամանակ հայտնում ենք, որ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով սահմանված պահանջներին համապատասխան՝ 2018թ-ի դիմումների և տեղեկատվական հարցումների ամբողջական տարեկան վիճակագրությունը կտեղադրվի մարզպետարանի կայքէջի համապատասխան բաժնում:

3.Հարցման երրորդ կետին պատասխանելու համար լրացուցիչ աշխատանք է պահանջվում, ուստի անհրաժեշտ տեղեկատվությունը կտրամադրենք «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 7.3 կետով սահմանված 30-օրյա ժամկետում:

ՀԱՐԳԱՆՔՈՎ Լ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

Կատարող՝
Տեղեկատվության և հասարակայնության
հետ կապերի բաժին